ՍՈՂՀԱԼԳԻՐԱԿԱՆ

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՐ
Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԻՈՋԵԱՆԸ

Խոր ցավով տեղեկացնում ենք, որ սեպտեմբերի 22-ի առավոտյան Սիդնեյում սրտի կաթվածից 66 տարեկան հասակում վախճանվել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ հոգեւորականի անժամանակ եւ անակնկալ վախճանը մեծ ցավ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասի եւ մեր ժողովրդի զավակների համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն Հոգեւոր Խորհուրդը եւ Հայ Եկեղեցու հոգեւորականաց դասն առ Աստված աղոթքով բարեհիշատակ Սրբազան Հոր հոգու խաղաղության եւ հանգստության համար՝ սգում են Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանի մահը:

Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը (ավագանի անունով Եղիա) ծնվել է 1946 թ. օգոստոսի 18-ին Հալեպում: Այնտեղ էլ ստացել է նախնական կրթությունը:

1961 թ. ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, 1968 թ. ավարտել ընծայարանի բաժինը:

1966 թ. մայիսին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1968 թ. հուլիսին՝ աբեղա՝ ձեռամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի:

1971 թ. նոյեմբերին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ձեռամբ ստացել է վարդապետական աստիճան:

1968-1971 թթ. վարել է Երուսաղեմի ընծայարանի փոխտեսչի եւ քարտուղարի պաշտոնները՝ դասավանդելով միաժամանակ գրաբար, աշխարհագրություն:

1972 թ. ստացել է վարդապետական լանջախաչ եւ ծաղկյա փիլոն կրելու իրավունք:

1970-1971 թթ. միաժամանակ վարել է Գյուլպենկյան մատենադարանի տեսչի պաշտոնը:

1971-74 թթ. Երեւանի պետական համալսարանում հետեւել է հայոց լեզվի եւ գրականության դասընթացներին՝ որպես ազատ ունկնդիր:

Նույն տարիներին Էջմիածնի հոգեւոր ճեմարանում դասավանդել է Մեկնություն Հին եւ Նոր Կտակարանների, Ծիսագիտություն, Վարք Սրբոց եւ Քրիստոնեական առարկաները:

1974-1975 թթ., վերադառնալով Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, վարել է Ժառանգավորաց վարժարանի եւ ընծայարանի տեսչի պաշտոնը՝ միաժամանակ դասավանդելով Աստվածաբանություն, Գրաբար եւ Ծիսագիտություն:

1975թ. նոյեմբերից, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին եպիսկոպոսի հրավերով, վարել է թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

Տ. Աղան եպիսկոպոսն աշխատակցել է Ս. Աթոռի «Սիոն» ամսագրին: Կազմել է ամսագրի 1866-77 թթ. եւ 1927-71 թթ. նյութերի մատենագիտությունը:

1976 թ. հունիսին Սիդնեյում ծայրագույն վարդապետական աստիճան է ստացել՝ ձեռամբ առաջնորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանի:

1981 թ. նոյեմբերին Վեհափառ Հայրապետի կոնդակով նշանակվել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ:

1982 թ. փետրվարի 14-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

1991 թ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Ինդկասպանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ:

1993 թ. հունվարի 17-ին Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով Աղան Սրբազանին արքության պատիվ է շնորհվել:

1994-97 թթ. ընտրվել է Ավստրալիայի Եկեղեցիների Ազգային խորհրդի առաջին նախագահ:

1995-ից Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ էր:

1998-ից ի վեր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ներկայացրել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Մասնակցել է ԵՀԽ-ի Կանբերայի (1991 թ.) եւ Հարարեի (1998 թ.) համագումարներին:

2001-ից առ այսօր, երեք հաջորդական շրջանների համար, Նյու Սաութ Ուելյզ Էկումենիկ խորհրդի փոխնախագահ էր ընտրվել:

Այս տարիների ընթացքում հոգելույս Սրբազանն արժանացել է Ավստրալիայի պետական շքանշանների՝ երկրին ու հասարակությանը, հատկապես հայ գաղութին մատուցած բարի ծառայության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ